


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. օգոստոսին


/վերլուծություն/

2012թ. օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 15869 գործարքներ, որոնց քանակը 2012թ. հուլիսի համեմատ աճել է 13.0%-ով, իսկ 2011թ. օգոստոսի համեմատ՝ 1.4%-ով:

2012թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4686 օտարման գործարքների 72.4%-ը կազմել են առուվաճառքները, 27.2%-ը՝ նվիրատվությունները և 0.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.0%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2012թ. օգոստոսին, 2012թ. հուլիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 18.1%-ով, իսկ 2011թ. օգոստոսի համեմատ՝ 6.9%-ով:

2012թ. օգոստոսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 57.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. օգոստոսին, 2012թ. հուլիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 15.3%-ով, իսկ 2011թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 7.8%-ով:

2012թ. օգոստոսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	օգոստոս 2011թ.	օգոստոս 2012թ.	հուլիս 2012թ.
<b>Կենտրոն</b>	438200	416800	415050
<b>Արաբկիր</b>	337800	343700	342800
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	262900	272500	270100
<b>Նոր-Նորք</b>	226600	235000	232050
<b>Ավան</b>	247400	245050	243000
<b>Էրեբունի</b>	234300	239600	238300
<b>Շենգավիթ</b>	223100	240600	238500
<b>Դավթաշեն</b>	258100	265000	263100
<b>Աջափնյակ</b>	221200	231400	229800
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	227400	229800	228400
<b>Նուբարաշեն</b>	145400	140500	140200
<b>Միջինը Երևանում</b>	<b>256600</b>	<b>260000</b>	<b>258300</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. օգոստոսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. հուլիսի համեմատ, աճել են 0.7%-ով:

2012թ. օգոստոսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 406 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. հուլիսի համեմատ աճել է 11.2%-ով, իսկ 2011թ. օգոստոսի համեմատ՝ 1.2%-ով:

2012թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		օգոստոս 2011թ.	օգոստոս 2012թ.	հուլիս 2012թ.
<b>Արագածոտն</b>	<b>Աշտարակ</b>	124600	113500	112000
	<b>Ապարան</b>	54400	49100	49100
	<b>Թալին</b>	63200	61100	61100
<b>Արարատ</b>	<b>Արտաշատ</b>	99300	92500	92500
	<b>Մասիս</b>	113200	109100	109100
	<b>Վեդի</b>	94100	97050	97050
	<b>Արարատ</b>	82600	74100	74100
<b>Արմավիր</b>	<b>Վաղարշապատ</b>	137700	153200	153200
	<b>Արմավիր</b>	116300	118000	118000

	<b>Մեծամոր</b>	79800	86200	86200
<b>Գեղարքունիք</b>	<b>Սևան</b>	92100	99000	99000
	<b>Գավառ</b>	52400	53600	53600
	<b>Մարտունի</b>	92700	106500	105200
	<b>Վարդենիս</b>	35800	38000	36150
	<b>Ճամբարակ</b>	24300	23050	22000
<b>Լոռի</b>	<b>Վանաձոր</b>	89900	87000	87000
	<b>Ստեփանավան</b>	72400	74100	73900
	<b>Սպիտակ</b>	93400	99800	99800
	<b>Ալավերդի</b>	35500	51600	51600
	<b>Տաշիր</b>	46100	43500	42850
	<b>Թումանյան</b>	13100	11000	11000
	<b>Շամլուղ</b>	9000	8000	8000
<b>Կոտայք</b>	<b>Ախթալա</b>	21300	19500	19500
	<b>Աբովյան</b>	136600	153000	153000
	<b>Նոր Հաճն</b>	120800	128200	128200
	<b>Բյուրեղավան</b>	103000	107100	107100
	<b>Եղվարդ</b>	109500	108500	108500
	<b>Հրազդան</b>	60300	60000	60000
	<b>Ծաղկաձոր</b>	188000	292500	292500
<b>Շիրակ</b>	<b>Զարենցավան</b>	73600	84000	84000
	<b>Գյումրի</b>	106800	108900	108900
	<b>Արթիկ</b>	65200	64300	64300
<b>Սյունիք</b>	<b>Մարալիկ</b>	35400	37300	36400
	<b>Գորիս</b>	123300	115000	115000
	<b>Կապան</b>	99100	90100	90100
	<b>Սիսիան</b>	89300	83100	81400
	<b>Մեղրի</b>	73300	70000	68000
	<b>Ագարակ</b>	42400	43800	42400
	<b>Քաջարան</b>	71700	94100	94100
<b>Վայոց Ձոր</b>	<b>Դաստակերտ</b>	8000	8000	8000
	<b>Վայք</b>	81800	86100	85500
	<b>Եղեգնաձոր</b>	109800	117500	117500
<b>Տավուշ</b>	<b>Ջերմուկ</b>	118200	103800	102600
	<b>Դիլիջան</b>	107100	104000	104000
	<b>Իջևան</b>	124100	114000	114000
	<b>Բերդ</b>	50300	52300	51200
	<b>Նոյեմբերյան</b>	42300	43000	41500
	<b>Այրում</b>	30100	25000	24500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. հուլիսի համեմատ, աճել են 0.4%-ով:

2012թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 397 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 126, մարզերում միասին վերցրած՝ 271: 2012թ. օգոստոսին, 2012թ. հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 5.9%-ով, ընդ որում Երևանում՝ 0.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 8.4%-ով: 2011թ. օգոստոսի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 19.5%-ով, ընդ որում Երևանում՝ 1.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 25.7%-ով:

2012թ. օգոստոսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	օգոստոս 2011թ.	օգոստոս 2012թ.	հուլիս 2012թ.
Կենտրոն	453400	464500	463800
Արաբկիր	363300	370500	369600
Քանաքեռ Զեյթուն	269100	282000	280500
Նորք Մարաշ	292100	308000	307100
Ավան	250800	261500	260400
Էրեբունի	240800	229300	228800
Շենգավիթ	235000	246200	245100
Դավթաշեն	272400	264000	263800
Աջափնյակ	234000	240000	239600
Մալաթիա Սեբաստիա	235600	229500	228000
Նուբարաշեն	150100	144500	144500
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>272400</b>	<b>276400</b>	<b>275600</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. օգոստոսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. հուլիսի համեմատ աճել են են 0.3%:

2012թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առավաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		օգոստոս 2011թ.	օգոստոս 2012թ.	հուլիս 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	128500	134500	133100
	Ապարան	55900	53100	53050
	Թալին	64400	68650	68650
Արարատ	Արտաշատ	106000	98300	98250
	Մասիս	116800	111500	111500
	Վեդի	96800	100200	100200
	Արարատ	87200	87250	87250
Արմավիր	Վաղարշապատ	158000	152200	152000
	Արմավիր	119000	104200	104000
Գեղարքունիք	Սևան	96000	94100	94100
	Գավառ	54000	52300	52100
	Մարտունի	93500	93000	93000
	Վարդենիս	39500	34000	34000
	Ճամբարակ	27300	25900	25900
Լոռի	Վանաձոր	98500	98100	98000
	Ստեփանավան	75000	87600	87550
	Սպիտակ	102600	113500	113250
	Ալավերդի	37000	46600	46600
	Տաշիր	49800	50200	50200
	Թումանյան	13700	12000	12000
	Շամլուղ	10500	13200	13200
Ախթալա	22500	29400	29400	

Կոտայք	Աբովյան	144000	154600	153500
	Նոր Հաճն	128400	129800	129800
	Բյուրեղավան	104700	120000	119900
	Եղվարդ	115400	115350	115350
	Հրազդան	64000	79000	79000
	Ծաղկաձոր	309000	305000	305000
	Չարենցավան	75500	82200	82200
Շիրակ	Գյումրի	118000	117400	117200
	Արթիկ	67200	61000	61000
	Մարալիկ	38000	49000	49000
Սյունիք	Գորիս	132000	127000	126900
	Կապան	102000	98300	98200
	Սիսիան	92400	89600	89600
	Մեղրի	74300	76300	76200
	Ագարակ	44100	46200	46000
	Դաստակերտ	10500	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	84000	84100	83500
	Եղեգնաձոր	118000	113000	112000
	Ջերմուկ	121400	122100	121800
Տավուշ	Դիլիջան	110000	108300	107000
	Իջևան	133000	121200	121000
	Բերդ	52600	57800	57700
	Նոյեմբերյան	44900	46100	46050
	Այրում	31800	34300	34200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. հուլիսի համեմատ, աճել են 0.2%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. օգոստոսին հանրապետությունում օտարվել են 1544 միավոր /762.34 հա/ հողեր, որից Երևանում՝ 170 միավոր /15.67 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 784 միավոր /695.60 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.58 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 536 միավոր /45.02 հա/, որից Երևանում՝ 119 միավոր /8.08 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 194 միավոր /14.68 հա/, որից Երևանում՝ 47 միավոր /7.00 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 16 միավոր /2.87 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.01 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 11 միավոր /3.78 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 3 միավոր /0.38 հա/ ընդհանուր մակերեսով:

2012թ. օգոստոսին հանրապետությունում օտարված հողերից 1255 միավորի /663.50 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 78 միավոր /8.79 հա/, նվիրատվության գործարքներ՝ 280 միավորի /97.91 հա/, որից Երևանում՝ 92 միավոր /6.88 հա/ և փոխանակության գործարքներ՝ 9 միավորի /0.93 հա/:

Հանրապետությունում 2012թ. օգոստոսին, 2011թ. օգոստոսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 12.3%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 51.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 11.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի

նկատմամբ աճել է 23.1%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 147.56 հա, որից 139.97 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 26.6%-ը կամ 334 գործարքներ /109.28 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 19 միավոր /4.77 հա/, իսկ 72.7%-ը կամ 913 միավորը /544.14 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 59 միավոր /4.01 հա/: 2012թ. օգոստոսին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 8 գործարք /10.08 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. օգոստոսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	1	0.01	0	0.00	18	4.77	1	0.10	0	0.00	38	2.67	20	1.24
Արագածոտն	11	8.78	0	0.00	1	0.02	3	0.12	51	133.63	1	0.14	23	2.26	1	0.002
Արարատ	5	1.43	2	0.09	3	0.12	10	0.31	96	53.15	0	0.00	42	3.04	4	0.18
Արմավիր	4	4.20	0	0.00	3	0.37	12	0.29	90	135.78	0	0.00	58	6.92	1	0.01
Գեղարքունիք	2	0.35	1	0.49	8	0.91	8	2.43	229	90.75	0	0.00	9	1.16	0	0.00
Լոռի	3	0.84	2	0.19	10	0.21	15	0.95	19	14.90	0	0.00	6	0.68	3	0.03
Կոտայք	32	33.89	1	0.11	65	4.74	30	1.12	63	45.43	2	0.33	80	7.03	10	0.52
Շիրակ	2	1.92	1	1.14	4	0.11	19	0.50	19	21.56	0	0.00	2	0.01	0	0.00
Սյունիք	3	31.08	0	0.00	5	0.30	5	0.19	11	14.41	0	0.00	4	0.51	2	0.03
Վայոց Ձոր	5	1.14	2	0.12	2	0.10	9	0.26	11	5.72	0	0.00	5	0.28	2	0.01
Տավուշ	5	1.27	3	0.26	4	0.30	2	0.01	2	0.94	0	0.00	5	0.42	2	0.01
Ընդամենը	72	84.90	13	2.41	105	7.18	131	10.95	592	516.37	3	0.47	272	24.98	45	2.03

Ստորև ներկայացվում է 2012թ. օգոստոսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	12	4.08	1	0.01	0	0.00	11	4.07	7	0.69	0	0.00	0	0.00	0	0.00	7	0.69
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	15	8.91	11	8.78	0	0.00	1	0.02	3	0.12
Արարատ	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	17	1.52	3	1.01	2	0.09	2	0.11	10	0.31
Արմավիր	6	0.19	0	0.00	2	0.17	4	0.02	11	3.83	2	3.36	0	0.00	1	0.20	8	0.27
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	19	4.18	2	0.35	1	0.49	8	0.91	8	2.43
Լոռի	3	0.03	0	0.00	2	0.01	1	0.02	27	2.16	3	0.84	2	0.19	8	0.20	14	0.93
Կոտայք	6	0.03	0	0.00	2	0.01	4	0.02	119	35.81	29	29.87	1	0.11	63	4.73	26	1.10

Շիրակ	9	0.21	0	0.00	0	0.00	9	0.21	17	3.47	2	1.92	1	1.14	4	0.11	10	0.30
Սյունիք	4	0.18	0	0.00	1	0.01	3	0.17	9	31.39	3	31.08	0	0.00	4	0.29	2	0.02
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	20	1.72	5	1.14	2	0.12	2	0.10	9	0.26
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	1.84	5	1.27	3	0.26	4	0.30	2	0.01
Ընդամենը	41	4.73	1	0.01	8	0.21	32	4.51	275	95.52	65	79.62	12	2.40	97	6.97	99	6.44

2012թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 7 գործարք /5.27 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. օգոստոսին, 2011թ. օգոստոսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 1.1%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 3.5 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 0.7%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 27.5%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 28.7%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 54.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 20.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. օգոստոսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	8	6.34	88.8	1100.3	439.5	35	13.60	365.0	12000.0	3816.7
Ապարան	2	0.28	1218.2	2730.0	1974.1	7	1.80	86.5	2727.3	705.0
Թալին	1	2.16	38.2	38.2	38.2	2	107.20	93.6	5494.5	620.0
Ծաղկահովիտ						3	9.64	79.5	1000.0	245.5
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						43	13.63	335.1	10833.3	2775.6
Մասիս						32	24.06	200.0	11904.8	3075.2
Վեդի	3	1.01	84.7	600.0	262.7	20	14.97	207.0	10795.1	1903.7
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	0.30	75.2	75.2	75.2	57	46.50	294.3	9090.0	1535.3
Բաղրամյան						7	48.30	90.6	2561.1	745.0
Վաղարշապատ	1	3.06	192.3	192.3	192.3	25	40.76	444.4	11764.7	2600.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						210	73.87	199.8	1875.0	403.2
Ճամբարակ						4	2.86	60.5	953.3	340.0
Մարտունի	2	0.35	265.7	610.4	438.0	3	1.70	51.1	2850.0	733.6
Սևան						6	3.41	52.2	2134.8	318.5
Վարդենիս						6	8.92	41.2	2575.1	390.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						6	1.19	170.4	6424.2	648.2
Գուգարք						2	0.25	234.6	6065.9	751.3
Սպիտակ	2	0.23	650.0	6441.1	3545.6			250.0	5555.5	728.1
Ստեփանավան	1	0.61	1119.3	1119.3	1119.3	3	0.83	90.6	1686.6	300.0
Տաշիր						8	12.63	45.3	1384.4	145.3
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	10	2.99	67.5	8423.8	1759.7	32	25.98	279.3	11942.7	4662.6

Եղվարդ	11	16.32	71.6	1215.5	376.7	23	14.25	174.4	11971.8	2684.8
Հրազդան	8	10.56	118.3	698.6	350.0	7	4.77	130.5	10256.4	1845.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	1.92	259.4	295.3	277.4	7	3.95	252.0	1693.1	595.5
Ամասիա						3	2.62	40.9	261.0	128.5
Անի						7	12.59	110.6	546.9	370.0
Աշոցք						1	0.50	58.5	215.8	124.5
Արթիկ						1	1.90	79.4	1428.6	385.0
Սյունիքի մարզ										
Գորիս						5	8.96	92.6	1023.2	700.0
Կապան	1	29.80	137.5	137.5	137.5			120.0	841.6	347.3
Մեղրի	2	1.28	242.2	472.2	357.4			193.0	3000.0	725.5
Սիսիան						4	1.84	46.3	1977.4	515.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	1.14	44.6	1600.0	428.0	10	5.59	125.0	10000.0	1875.0
Վայք						1	0.13	58.8	1430.7	612.3
Տավուշի մարզ										
Բերդ								213.3	3783.8	675.3
Իջևան	5	1.27	342.4	1684.4	860.7	1	0.04	267.5	9454.5	1235.5
Նոյեմբերյան						1	0.90	46.7	7368.4	848.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. օգոստոսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն	Մտավելագույն	Միջին	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	190.0	2819.7	2819.7	2819.7	18	16815.0	130.7	22200.0	2571.8
Ապարան						3	3560.0	124.1	609.6	380.0
Թային						2	2190.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ								60.0	214.3	87.0
Արարատի մարզ										
Արտաշատ	1	450.0	847.9	847.8	847.8	9	8030.0	173.9	7140.3	893.0
Մասիս						30	18277.0	187.5	25000.0	1206.0
Վեդի	1	600.0	646.0	646.0	646.0	3	4090.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						17	15544.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան	1	2000.0	57.5	57.5	57.5	1	1600.0	100.0	833.3	237.5
Վաղարշապատ						38	46846.4	197.4	26528.4	1526.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	1150.0	186.6	1084.3	665.2
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	8	9070.0	219.8	219.8	219.8	3	4550.0	119.3	5000.0	278.8
Սևան						3	4330.0	240.0	3110.4	307.5
Վարդենիս						1	1615.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի								114.3	1388.9	216.0
Գուգարք	6	353.7	1148.8	2297.5	2041.9	4	5561.0	77.9	14083.3	1110.0



Սպիտակ	1	1290.0	244.7	244.7	244.7	2	1250.0	104.9	1348.3	204.4
Ստեփանավան	1	370.0	554.4	554.4	554.4			88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	32	23057.9	753.8	5648.9	2706.3	40	30523.5	264.5	35353.5	1962.0
Եղվարդ	31	24235.0	1911.0	3981.1	2582.3	30	29588.0	173.6	27000.0	2851.3
Հրազդան						10	10180.5	117.7	34848.5	1320.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	1129.4	557.2	2310.0	1410.0	1	40.0	113.6	18750.0	331.4
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի								67.9	180.6	160.0
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ						1	24.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						3	4553.6	112.2	1700.0	367.6
Կապան	1	640.0	198.1	198.1	198.1			67.9	2638.9	300.0
Մեղրի	3	2278.3	269.4	670.5	406.3	1	570.0	68.5	632.9	195.3
Սիսիան								123.5	875.0	197.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	400.0	1492.5	1492.5	1492.5	3	1600.1	96.7	7659.6	500.0
Վայք	1	582.9	864.6	864.6	864.6	2	1180.0	120.7	1448.3	200.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	111.0
Իջևան	2	2931.4	258.0	268.3	263.2	5	4207.0	74.1	14423.1	514.2
Նոյեմբերյան	2	82.3	1651.6	1656.0	1653.8			125.0	1948.1	221.0

2012թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 768 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 70.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2012թ. օգոստոսին, 2012թ. հուլիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 11.8%-ով, իսկ 2011թ. օգոստոսի համեմատ՝ 21.1%-ով:

2012թ. օգոստոսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 35 բնակարանների, 81 անհատական բնակելի տների, 285 հասարակական, 106 արտադրական նշանակության օբյեկտների, 241 հողերի, 3 այգետնակի և 17 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. օգոստոսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 6 վարձակալության գործարքների /այդ թվում 2 միավոր՝ 1.68 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2012թ. հուլիսի համեմատ նվազել է 25.0%-ով, իսկ 2011թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 33.3%-ով: 2012թ. օգոստոսին հանրապետությունում վարձակալված 637.08 հա հողերից 4.59 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 632.48 հա հողերից 613.91 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 1.25 հա արդյունաբերական օբյեկտների, 0.32 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Լոռու մարզում՝ 203.60 հա, որից 200.73 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1887 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.9%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. հուլիսի համեմատ, նվազել է 8.3%-ով, իսկ 2011թ. օգոստոսի համեմատ՝ 8.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.5%/, առանձնատների /24.2%/, հասարակական

նշանակության օբյեկտների /12.1%/ և հողերի /6.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1043 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. հուլիսի համեմատ, նվազել է 9.7%-ով, իսկ 2011թ. օգոստոսի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

2012թ. օգոստոսին հանրապետությունում գրավադրվել են 233.19 հա հողեր, որից 34.23 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 79.5%-ը կամ 185.48 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.16 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 143.42 հա, որից 140.07 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. օգոստոսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 162 գործարքներ, որից 112-ը՝ Երևանում: 2012թ. հուլիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 5.3%-ով, ընդ որում Երևանում աճել է 13.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 30.6%-ով: 2011թ. օգոստոսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 16.5%-ով, ընդ որում Երևանում՝ 18.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 12.3%-ով:

2012թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2387 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2012թ. հուլիսի համեմատ աճել է 33.8%-ով, իսկ 2011թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 10.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /26.6%/:

## **« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**